



**ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՍԱՄԲԼԵԱ ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE**

Հայաստանի Հանրապետություն
Վանաձոր, Տիգրան Մեծի 59
Tigran Mets, 59, Vanadzor
Republic of Armenia
Tel. (հեռ) (374 322) 4 22 68
E-mail hcav@hcav.am
E 2001

13 հունվարի, 2010 թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Ա. Գովսեփյանին

Հաղորդում

2010 թվականի հունվարի 10-ին մեր կազմակերպությունը՝ Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, դիտորդական առաքելություն է իրականացրել թիվ 10 ընտրատեղամասում մեծամասնական կարգով ԱԺ պատգամավորի լրացուցիչ ընտրությունների ժամանակ:

Դիտորդական առաքելության իրականացման ժամանակ մեր կազմակերպության դիտորդների կողմից արձանագրվել են որոշակի խախտումներ:

Դեպքի նկարագրություն

Թիվ 10/19 ընտրատեղամասում հանձնաժողովի անդամների կողմից արհեստականորեն լրացվել են ստորագրություններ ընտրողների գրանցամատյանում, որը նկատել են դիտորդներն ու Նիկոլ Փաշինյանի, Դավիթ Հակոբյանի վստահված անձինք: Նրանք բողոքել են, որից հետո հանձնաժողովի նախագահը և Արա Սիմոնյանի վստահված անձինք աղմուկ են բարձրացրել, հայիոյելով, քաշքշելով, հրելով ու ծեծելով դուրս են հանել բողոքող անձանց, այդ թվում նաև որոշ լրագրողների, դադարեցրել ընտրության գործընթացը և փակել ընտրատեղամասը ավելի քան մեկ ժամով: Այդ ընթացքում սեղանից անհայտացել են գրանցամատյանները, դրանք որոշ ժամանակ անց վերադարձվել են հանձնաժողովի նախագահի կողմից, որոնք նա հանել է իր ծոցից: Հետագայում քվեարկության եկած որոշ քաղաքացիներ բացահայտել են, որ իրենց և իրենց հարազատների անվան դիմաց արդեն ստորագրված է: Նմանատիպ մեկ դեպքի ժամանակ ընտրատեղամասում ներկա է եղել նաև կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար Ա. Բախչազուլյանը: Այնուհետև քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ պարզվել է, որ ընտրացուցակներում տարբեր քաղաքացիների անվան դիմաց առա բազմաթիվ ստորագրություններ նույնն են:

Քվեարկության գործընթացը ընտրատեղամասում դադարեցնելու հետևանքով քաղաքացիները զրկված են եղել քվեարկելու հնարավորությունից: Տասնյակ քաղաքացիներ եկել են քվեարկելու և ստիպված ետ վերադարձել:

Հանձնաժողովի նախագահին ներկայացված բողոքները, չնայած հանձնաժողովի նախագահի խոստմանը, չեն քննարկվել հանձնաժողովի կողմից:

Եզրակացություն

ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ ընտրությունների ժամանակ իրականացված ընտրական խախտումների համար սահմանվում է պատասխանատվություն: Մասնավորապես՝

149-րդ հոդվածի 1-ին կետը պատասխանատվություն է սահմանում քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելու, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի կամ նրա վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը՝ և այդ նույն արարքը, որ զուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, կատարվել են մի խումբ անձանց կողմից:

Նույն օրենսգրքի 150-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում ընտրությունների ընթացքում ձայների ակնհայտ սխալ հաշվարկի կամ ընտրությունների արդյունքների, այդ թվում՝ արձանագրությունների, դրանց պատճենների, այլ ընտրական փաստաթղթերի և դրանց քաղվածքների ակնհայտ սխալ տվյալներով հաստատելու, ինչպես նաև որևէ այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու համար:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով թիվ 10/19 ընտրատեղամասում մեր դիտորդի կողմից արձանագրված խախտումները՝ խնդրում են Ձեր լիազորությունների շրջանակում համապատասխան միջոցառումներ ձեռնարկել:

1. քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելու
2. վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու
3. հանձնաժողովի նախագահի կողմից ընտրողների գրանցամատյանում ակնհայտ կեղծ տեղեկություններ գրանցելու հիմքով համապատասխան անձանց նկատմամբ պատասխանատվություն սահմանելու համար:

Հարգանքներով՝

կազմակերպության նախագահ,
Լոռու մարզի ՇՊԱԿ համակարգող՝

Արթուր Սաքունց